8. ՀԵՔԻԱԹԻ ԴՅՈՋԱՄԵՆ

Իրեք ախպեր էինք, մեկս քոռ, մեկս թոփալ, մեկս չփլաղ։

Չփլաղ ըսավ.— Մենք էսքան անոթի կու մեռնինք, էրթանք մեզի ավղուշ էնենք, մեզի համար իղարա էնենք։

Քոռ ախպեր, չախմախ չունեցող թվանքը ումուղը առավ, էկավ. էրկու ղոլ ռաստ էկավ, մեկը ջուր չկար, մեկը չորցած էր. չորցած գոլի մեջ իրեք հատ օրդադ կար, մեկը սատկած էր, մեկը հոգի չուներ։

Քոռ ախպերը ըսավ.— Տիա, հոգի չունեցող սատկած օրդաձներ չորցած գոլի մեջ կու լըղան գը։

Թոփալ ախպերը ըսավ, քոռ ախպորը.— Իմ ումուզես մարարիս[1] ա՛ռ, ու օրդըգները զարդ։

Քոռ ախպերը չախմախ չունեցող թվանքով օրդըգները զարդեց։ Թոփալ ախպերը վազեց օրդըգները առնելու, չփլախ ախպերը ըսավ.— Դու չես կրնա առնե պայե, ես էրթամ, առնեմ պայեմ։

Չփլախ ախպերը վազեց օրդըգները առավ, ծոցը պայեց։

Առան, էկան մեկ էրկու գեղի ռաստ էկան, սեկը փլած էր, մեկը պատ չուներ։ Փլած տնեն նե մտան, ըսին. «Մենք էս օրդըգները էփենք էս տեղ»։ Բոլորները այեցին, էրկու պղինձ կար, մեկը ոռ չուներ, մեկը պռունկ չուներ, ըսին. «Էստեղ օնչոք չկա էփել տանք»։ Այեցին էրկու կնիկ կա, մեկը մեռած, մեկը սատկած էր։ Թոփալ

[1] Նշան (Ս. Բ.)։

ախպերը էրկու հ՚աք[1] *հոգի չունեցող կնկան զարդեց, կնիկ հոգևորցավ։ Կնկան ըսին. «Մեր օրդրգները էփեմ»։*

Կնիկ շուտ ելավ, տակ չունեցող պղնձի մեջը գրավ, վրխկրը, վրխկրը կ՚էփեր։ Իրեք կիդր հացով բաշլայեցին ուղել։ Կերան, կ՚ըսեին. «Ա՜խ մեկ սոմին մի ըլլիր, վա՜յ սոմին մի ըլլիր» (իրեք կիդր հաց կերան չ՚կշտացան, դեռ սոմինի ախ կընեին)[2]*։*

---

[1] *Աքացի* (Ս. Բ.)։

[2] *Ծանոթություն ասացողի* (Ս. Կ.)։